ՀՅՈՒՍՎԱԾՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԶԱՐԴԱՐՎԵՍՏԻ ՄԵՋ ԵՎ ՆՐԱ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ

ԱՐՇԱՎԻՐ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

Մի շարք երկրների, նաև Հայաստանի միջնադարյան ճարտարապետական զարդաքանդակների մոտիվների զուգահեռ գոյությունը պայմանավորեց դրանց ձևերի զարգացման և ժամանակագրական սահմանների որոշումը։ Թեև այս հարցը դժվար է լիովին պարզաբանել, այնուամենայնիվ մեր բազմամյա պրոցումները թույլ տվեցին ուրվագծել այդ մոտիվների կազմավորման և զարգացման հնարավոր մի քանի ուղիները։ Այս նպատակի համար մենք սահմանափակվեցինք ամենատարածված և ամենաարտահայտիչ մոտիվով՝ հյուսվածքով։ Ըստ իտալացի արվեստաբան Պաոլո Վերցոնեի, բոլոր տեսակի կլոր օղակներով հյուսվածքներն առաջացել են նախահիմքից՝ ուղղակի կլոր ձևից[1]։ Մեր կարծիքով, հյուսվածքի նախահիմքը ոչ թե կլոր ձևն է, այլ ձիգ և թույլ հյուսված լարանը, որը սովորաբար օգտագործվել է ինչպես դռների, պատուհանների, այնպես էլ հիշատակարանային բնույթի կամ այլ նշանակության քարե սալերի շրջանակների համար։ Այստեղ չենք անդրադառնալու «զամբյուղային» հյուսվածքին, թեև դրա և ուսումնասիրվող հյուսվածքի միջև գոյություն ունի որոշ կապ։ Նշենք, որ հյուսվածքը դիտվելու է որպես միավոր, առանց հաշվի առնելու նյութը և նրա կատարման եղանակը, թեպետ դրանք ունեն որոշակի դեր ընդհանուր զարդի նկարի բնույթի ստեղծման գործում։ Ուշագրավ է, որ հյուսվածքի ամենավաղ ձևը, այսինքն ձիգ և թույլ հյուսված լարանը, տեսնում ենք դեռ բրոնզի ժամանակաշրջանում, իսկ ավելի ուշ լարանի այս երկու տարատեսակները հանդես են գալիս միասին։ Ոչ մի կասկած չկա, որ հնադարյան մարդու պատկերացման մեջ հյուսվածքն ուներ սիմվոլիկ նշանակություն, արտահայտում էր ամբողջություն, բացառում էր առարկայի, իրի դեֆորմացիայի ենթարկվելը։ Այս առումով ավելորդ չենք համարում բերել Վ. Ստասովի խոսքերը. «...աշխարհի ժողովուրդների համար զարդը ոչ մի անգամ չէր պարունակում ոչ մի անիմաստ գիծ... Ամեն մի գծիկ ուներ իր նշանակությունը, հանդիսանում էր բառ, նախադասություն, հայտնի հասկացությունների արտահայտություն, պատկերացումներ»[2]։ Իհարկե, ժամանակի ընթացքում, գիտակցաբար կամ անգիտակցաբար, անտեսելով այս դաղափարը, հյուսվածքը ստանում է միայն զարդաքանդակային բնույթ՝ դառնալով յուրահատուկ և գեղարվեստական նուրբ մոտիվ։

Մինչքրիստոնեական Հայաստանի արվեստի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հավասար չափի փոքր կլոր օղակներով հյուսվածքը արված է Թոփրախ-Կալեի (Վան) սալի մի կտորի[3] և Գառնիի բաղնիքի մոզաիկ հատակի շրջանակի վրա[4] (նկ. 1)։ Այս ձևի հյուսվածք պատկերված է նաև Անտիոք քաղաքի Ցակտոյի տաճարի, ինչպես և Մակեդոնիայի Ստոբիի «Սինագոգա» բա-

---

[1] Paolo Verzone, L'arte preromanica in Liguria, Torino, 1945.

[2] В. В. Стасов, Русский народный орнамент, 1, М., 1894, с. 207.

[3] Б. Б. Пиотровский, Искусство Урарту VIII—VI вв. до н. э., Л., 1962. с. 99, рис. 64.

[4] Б. Н. Аракелян, Гарни II, Ереван, 1957, табл. VI.

դիլիկայի մեջ[5], արևելյան հունական անոթների վրա[6] և այլն։ Հետևաբար հելլենիստական և վաղ քրիստոնեական ճարտարապետական հուշարձանների և կիրառական արվեստի զարդաքանդակների մեջ այն ամենատարածված մոտիվներից է։ Սրա ավելի հնագույն օրինակները շատ են Ասորեստանի զարդարվեստի մեջ։ Ի տարբերություն ուրարտա-հելլենիստականների, ասորական հյուսվածքների կլոր օղակների մեջ պատկերված է բազմածաղկատերևանի վարդ (Նիմրութ քաղաքի Ասուրբաննիպալի պալատ)[7]։

Նկ. 1. Գառնի. բաղնիքի խճանկարը։

Հայաստանի վաղ քրիստոնեական (IV—VII դդ.) ճարտարապետության մեջ կլոր հուլունքաձարդ օղակներով հյուսվածքը քանդակված է Մաստարայի տաճարի, իսկ ձվաձևը՝ Աշտարակի (Կարմրավոր), Արուճի և այլ եկեղեցիների վրա։ Նշված հուշարձանների մեջ կարելի է տեսնել ասորական, ուրարտական և հելլենիստական հյուսվածքների օրինակների յուրահատուկ օգտագործում, չնայած որ ուրարտա-հելլենիստական մոնումենտալ ճարտարապետության մեջ այս հյուսվածքը չի երևում։ Հայաստանում կլոր օղակներով հյուսվածքային մոտիվը ինչ-ինչ պատճառներով սահմանափակ կիրառում է գտել և հանդիպում է միայն նշված օրինակներում։ Ենթադրում ենք, որ այդ մոտիվը լրիվ չի բավարարել ժամանակի էսթետիկական պահանջները, որի պատճառով սկսած VII դ. հյուսվածքի կլոր օղակների (այս անգամ բացված) մեջ ի հայտ եկան խաղողի ողկույզը, տերևները նուռը (Զվարթնոց, Թալին) և այլն։

Մեր կարծիքով, կլոր օղակներով հյուսվածքն առաջացել է Արևելքում, հավանական է Ասորեստանում, իսկ Հայաստանում այն արտահայտվեց մի նոր որակով, այսինքն՝ հյուսվածքը բաղկացած է մեծ և փոքր կլոր օղակներից, որտեղ փոքր օղակները, որպես հանգույցներ, կլոր կամ քառակուսի (Զվարթնոց) մեծ օղակները կապում են միմյանց (այս ձևը անվանում ենք ճիմնական ճյուսվածք, որը հիմք է հանդիսանալու այսուհետև տրվող տարբերակների համար)։

---

[5] „История Византии", I, M., 1967, с. 104; R. F. Hoddinot, Early Byzantine churches in Macedonia and Southern Serbia, London, 1963, tabl. 52 g, h.

[6] Marcelle F. Lambrino, Les vases archaïques d'Histria, Bucarest, 193, p. 320, fig. 304.

[7] A. Perrot et Ch. Chipiez. Histoire de l'art, II, Paris, 1884.

Հայաստանի վաղ քրիստոնեական ճարտարապետության մեջ միայն կլոր օղակներով ձևը կարելի է տեսնել Պեմզաշենի, Սիսիանի[8], Զվարթնոցի[9] և այլ հուշարձանների վրա։ Եթե առաջին երկու հուշարձաններում այս մոտիվն ունի հանգույցներ, որոնց մեջ կան հուլունքներ, ապա Զվարթնոցի հյուսվածքի հանգույցները շատ փոքր են, այսինքն ուղղակի հանգույցներ են, առանց հուլունքների։ Բացի այդ, Զվարթնոցում կլոր օղակները դասավորված են երկու շարքով և օղակների միջի տարածություններում ոչ թե հուլունքներ են, այլ վեցածայր վարդ ու խաղողի ողկույզ։ Զվարթնոցի նշված հյուսվածքները այդ շրջանում եզակի են Հայաստանում։ Նույն ձևի փոքր հանգույցով հյուսվածքի հանդիպում ենք նաև հարավային Ֆրանսիայի, Հարավսլավիայի, Իտալիայի մոտավորապես նույն ժամանակաշրջանի հուշարձաններում։ Փոքր հանգույցներով հյուսվածքները կիրառվել են Իտալիայում (Ալբենգա, Պավիա) և Ֆրանսիայում (Պրովանս՝ Ֆրեժյուս)[10]։ Պ. Վերցոնեի կարծիքով, սրանք վերաբերում են VI դ.։ Այս նույն ժամանակին են պատկանում նաև Լիբանանի Կաբր-Շիրամի բազիլիկայի[11], ինչպես և Ռավեննայի Վիտալիի եկեղեցու խոյակների հյուսվածքները[12]։ Հայաստանում այս ձևի հյուսվածքը նորից լայն կիրառություն է գտնում, սկսած X դ. վերջերից մինչև XI դ. սկիզբները (Անի՝ Գագիկաշեն, նկ. 2)[13]։ Վրաստանում այս մոտիվը առաջին անգամ տեսնում ենք X դ. Կումուրդոյի վրա[14]։ Նույն շրջանում, ի տարբերություն կլոր օղակներով հյուսվածքի, օգտագործվում են նաև քառակուսի օղակներ (շրջանակներ), որոնք կարելի է տեսնել հայկական և վրացական մի շարք հուշարձանների վրա (Անի՝ Մայր տաճար, Առաքելոց եկեղեցի, խաչքարեր[15], Նիկորցմինդա[16], Մցխեթա[17] և այլն)։ Քառակուսի օղակներով հյուսվածք հանդիպում ենք նաև Աբխազիայի Անակոպիական բերդի վերջին եկեղեցու (XI դ.) խորանի մեջ[18], Բալկաններում՝ Մակեդոնիայում (Ներեզի վանքի մարմարյա սալի վրա՝ XII դ.) և Օխրիդի ս. Սոֆիայի եկեղեցում (XIV դ.)[19]։

Հիմնական հյուսվածքից առաջացել է մի ուրիշ տարբերակ, կազմված մի շարք կլոր մեծ օղակներից ու դրանք կապող փոքր կլոր հանգույցներից՝ միահյուսված նույնակազմ մի ուրիշ շարքի հետ, որը տեղաշարժված է առաջին շարքի մեծ օղակի շառավղի չափով։ Նախահիմքից առաջացած մոտիվների նման այս տարբերակը ևս առաջացնում է ոչ թե մի գծային նկար, այլև մակերեսներ՝ շարքերի փոխուղղահայաց հյուսվածքների շնորհիվ։ Այսպես, Հայաստանում դա հանդիպում է սկսած XIII դ. (Անիի Տիգրան Հոնենցի և Ն. Մ. Տո-

---

8 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, с. 162, табл. VIII, рис. 34 а, б.

9 Թորոս Թորամանյան, Զվարթնոց, Երևան, 1978։

10 Denis Fossard, Le tombeau de Saint Pons à Cimiez (Provence) („Cahiers archeologiques", XV, Paris, 1965).

11 Henry Stern, Quelques pavements paleo-chrétiens de Liban („Cahiers archeologiques", XV, Paris, 1965).

12 F. W. Deichmann, Ravenna, Hauptstadt des spätantiker Abendlandes, I, Wiesbaden, 1969.

13 Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, I, Երևան, 1942, էջ 271, նկ. 171։

14 Г. Н. Чубинашвили, Вопросы истории искусства, Тбилиси, 1970, с. 244/10.

15 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., табл. 162.

16 Н. П. Северов, Памятники грузинского зодчества, М., 1947, с. 112, табл. 109.

17 ვახტანგ ძერაძე, ძველი ქართული ძეგლთმცოდნეობა, თბილისი, 1974, 102.

18 М. М. Трапш, Материалы по археологии средневековой Абхазии, IV, Сухуми, 1975, с. 104, рис. 35.

19 Н. П. Кондаков, Македония, СПб., 1909, с. 175, рис. 112, табл. II.

գարսկու[20] պեղած եկեղեցիներում, Մակարավանքի գավթի խաչքարի կտորի վրա և այլն) ու XVI—XVII դդ. մի շարք խաչքարերի վրա[21]։ Այս տարբերակը Վրաստանում հանդիպում է սկսած X—XI դդ. (Կումուրդո, Սամտավրո և այլն)[22]։ Եվրոպայի հարավ-արևելյան մասում այն կիրառվել է ավելի վաղ՝ VI—VII դդ. կեսերին պատկանող Բուտրինտո (ժամանակակից Ալբանիա) մկրտարանի խճապատկերների վրա։ Հավանական է, որ նույն ժամանակին է պատկանում Սպլիտ քաղաքի փոքր տաճարի մկրտարանի լատիներեն արձանագրությունով մի սալի վրա պատկերված մոտիվը (Հարավսլավիա-Խորվաթիա)[23]։ Այն կարելի է տեսնել նաև Իտալիայի մի շարք հուշարձանների վրա (Վենտիմիլիայում՝ VIII դ., Տոսկանիայում, Միլանում, Հռոմում՝ IX դ.)[24]։



Նկ. 2. Գաղիկաշեն. լուսամուտի պսակ։

Հիմնական հյուսվածքի մեկ այլ տարբերակը, որը դարձավ քրիստոնեական Արևելքի ճարտարապետական դեկորի ամենաընդունվածներից մեկը, հետևյալն է. մեծ կլոր օղակների մեջ դրանց կենտրոններով, նույն տրամագծով ներգծվում են չորս կիսաօղակներ։ Հաճախ հիմնական կլոր օղակի մեջ կարելի է տեսնել ավելի փոքր տրամագծով մեկ կամ երկու այլ կլոր օղակներ, որոնց կենտրոններով անցնում են փոխուղղահայաց կիսաօղակներ։ Իհարկե, այսպիսի հյուսվածքը ստանում է ավելի հարուստ և պլաստիկ տեսք, մանավանդ, երբ նրա մեջ ներգծվում է մի այլ հյուսվածքի տարբերակ՝ ռոմբաձև օղակներով շարք, որը, ըստ էության, թույլ հյուսված ձվաձև օղակներով հյուսվածքի վերափոխված ձևն է։ Այսպիսի հյուսվածքը, իր տարբերակներով, հանդիպում է շրջանակով կամ առանց դրա։ Շրջանակի դեպքում այն հյուսվում է շարքի մեծ կլոր օղակների հետ։ Այս մոտիվը հայկական ճարտարապետական դեկորի մեջ առաջին անգամ հանդես եկավ XI դ. (Անիի Մայր տաճար, Գաղիկաշեն) և ավելի ուշ՝ XIII դ., հայկական մի շարք այլ հուշարձանների վրա (Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցի, Սանահինի վանքի խաչքար և այլն)։ Այս մոտիվը կա նաև Վրաստանում՝ Սամտավրոում[25])։ Հայաստանում այս հյուսվածքը հասնում է մինչև XVII դ. (Ջուղա՝ խաչքար)։ Սրա զուգահեռները դեռ XIV դ. սկսեցին երևալ Հարավսլավիայում (Կրուշեվաց, Վելուշե, Լյուբոստինիա և այլն)[26], իսկ

---

[20] Նիկոլայ Տոկարսկի, Ճարտարապետական եզակի հուշարձան Անիի 1911 թ. պեղումներից («Հայկական արվեստ», Երևան, 1, 1947, աղ. 30)։

[21] „Documenti di architetura armena, 2. Khatchkar", Milano, 1969, fig. 54.

[22] Г. Н. Чубинашвили, նշվ. աշխ., էջ 214; Н. П. Северов, նշվ. աշխ., էջ 41, նկ. 25, էջ 97, նկ. 90։

[23] Joseph Strzygowski, Asiens bildende Kunst in Stichproben, ihr Wesen und Ihre Entwicklung, Augsburg, 1930, S. 289, abb. 275.

[24] Paolo Verzone, նշվ. աշխ., էջ 178—179։

[25] «Памятники архитектуры Грузии», Л., 1973, табл. 59, автор текста и составитель альбома Н. Джанибердзе.

[26] P. Mijović, Les liens artistiques entre l'Arménie, la Géorgie et les pays

XVI դ.՝ Ռումինիայում (Դյալու)[27]։ VIII դ. կեսերին պատկանող արևմտյան զուգահեռներից են Նոլիի (Իտալիա) և Վյենի (Ֆրանսիա), իսկ X դ.՝ Տեստոնեյ (Իտալիա) հուշարձանների վրայի[28] պատկերները։

Հետաքրքիր է նշել, որ արևմտյան զուգահեռներն իրենց հորինվածքով սխեմատիկ են, չոր, խիստ երկրաչափականացված, իսկ անդրկովկասյանները և բալկանյանները՝ ավելի խտացված ու գեղատեսիլ։

Հիմնական հյուսվածքի մի ուրիշ տարբերակ էլ բաղկացած է երկարավուն օղակներից, որոնք միմյանց միանում են զանազան ձևի հանգույցներով։ Կլոր հանգույցով տարբերակը Հայաստանում ի հայտ է գալիս XI—XII դդ. (Մարմաշեն, Սանահին[29], Սևանի խաչքար և այլն, նկ. 3), իսկ Վրաստանում՝ XI դ. Կացխիի[30] եկեղեցու և XII—XIII դդ. մի շարք այլ հուշարձաններում (Բետանիա[31], Սանահին և այլն)։ Այս մոտիվն օգտագործված է նաև Կիևի ս. Սոֆիա տաճարի Յարոսլավ Իմաստունի դամբարանի (XI դ.)[32], Ղրիմի (Մանգուբի բերդը՝ XV դ.), Ռումինիայի (Կուրտյա դե Արջեշ՝ XVI դ., Դոլիեշտի Մառի՝ XVII դ.), Մոլդավիայի (Բելգորոդ-Դնեստրովսկի բերդը՝ XIII—XIV դդ.) հուշարձանների վրա։ Թեև այս տարբերակը հայտնի է Արևելքի վաղ քրիստոնեական ճարտարապետության զարդարվեստում, բայց հարավ-արևելյան Եվրոպայի քրիստոնեական երկրների ճարտարապետության դեկորի մեջ դրան չենք հանդիպում, բացառությամբ Ռումինիայի։ Սա թույլ է տալիս ենթադրելու, որ գիտվող մոտիվը նշված վայրերում բերել են Ղրիմի հայ վարպետները, որոնք մինչև XV դ. կեսը այդ բազմամարդ հայկական գաղութի մեջ շինարարական մեծ գործունեություն ծավալեցին, ընդ որում և եկեղեցական։ Ուշադրավ է, որ վրացական Բետանիա հուշարձանի վրա եղած այս հյուսվածքը կարելի է տեսնել նաև Միջին Ասիայում (Աֆրասիաբ), որը, ըստ Ա. Պրիբիտկովայի, պատկանում է X դ[33]։ Երկարավուն օղակներով հյուսվածքը ավելի զարդացած ձևով պատկերված է Միջին Ասիայի մի ուրիշ հուշարձանի՝ Իբրահիմ իբն Հասանի (XII դ.) դամբարանի վրա (Ուզբեկստան)։ Կարծում ենք այն կատարված է VI—VII դդ. սոգդիական և պարսկա-բյուզանդական զարդարվեստի ավանդույթների հիման վրա[34]։

Հիմնական հյուսվածքից առաջացած ձևերից են մի շարք ութանկյուն օղակները, որոնց կենտրոններով ներգծվում են չորս փոխուղղահայաց կիսաութանկյուններ։ Այսպիսի հյուսվածքը Հայաստանում օգտագործվել է սկսած XIII դ. (Հաղպատ՝ գավիթ, Սանահին՝ ս. Աստվածածին եկեղեցի, Գեղարդ՝ խաչքարեր և այլն) մինչև XVII դ. (Երևանի և Մուղնիի եկեղեցիներ)։ Տվյալ մոտիվը, բացառությամբ Ռումինիայի (Դյալու եկեղեցու փոքր թմբուկի հիմքի վրա), չի երևում Եվրոպայի հարավ-արևելյան այլ երկրների դեկորների մեջ։ Ռումինիայում եղակի օրինակի առկայությունը ենթադրել է տալիս, որ այն բերել են ռումինահայ կամ այլազգի վարպետները, որոնց ծանոթ էր Հայաստանի հյուսվածքի նույն տարբերակը։ Մինչ այդ այս հյուսվածքը XI դ. օգտագործվել

---

yougoslaves an Moyen Age („Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena—1975", Venezia—S. Lazzaro, 1978, fig. 16, 17, 22).

27 „Documente de arhitectură românească, Institutul de constructii, Facultatea de arhitectură şi urbanism, Bucureşti, I, redactor responsabil Grigore Ionescu.

28 Paolo Verzone, Նշվ. աշխ., էջ 180։

29 О. Х. Халпахчьян, Санаин, М., 1973, с. 57, рис. 92.

30 ვახტანგ ბერიძე, Նշվ. աշխ., աղ. 123։

31 Н. П. Северов, Նշվ. աշխ., էջ 54, նկ. 41։

32 О. Х. Халпахчьян, Армяно-русские культурные отношения и их отражения в архитектуре, Ереван, 1957, рис. 1.

33 А. М. Прибыткова, Строительная культура Средней Азии, М., 1973, с. 26.

34 Л. И. Ремпель, Архитектурный орнамент Узбекистана, Ташкент, 1961, с. 164, рис. 70.

է Միջին Ասիայի մի շարք հուշարձաններում (Նարը բեն Ալի մզկիթը[35], Տերմեզյան իշխանների պալատը[36], Բուխարայի Մագոքի Ատտարիի մզկիթը)[37]։ Սա վկայում է, որ ութանկյուն օղակներով հյուսվածքի նախատիպը գտնվում է քրիստոնեական, ավելի ճիշտ հայկական զարդարվեստի մեջ, քանի որ Հայաստանում դեռևս XI դ. շատ տարածված էր մեր հիմնական հյուսվածքը։ Հետևաբար այս միջավայրում է ծնվել նաև այսպես կոչված հայտնի սելջուկյան



Նկ. 3. Սանահին. Զաքարյանների դամբարան։

հյուսվածքը, կամ շղթան, որին հաճախ հանդիպում ենք Հայաստանում սկսած XIII դ.։ Այս հյուսվածքի մի քանի օրինակներ կան Վրաստանում (Արտազի՝ XI դ.)[38], Իտալիայում (Պալերմո՝ XIII դ.), Ռումինիայում (Ցաշի՝ երեք լուսավորիչների եկեղեցին՝ XVII դ.), Լեհաստանում (Լվովի հայկական եկեղեցին՝ XIV դ.), Մոլդավիայում (Քիշինև՝ XIX դ.)։ Ենթադրում ենք, որ սելջուկյան հյուսվածքը ևս նշված վայրերում բերել են դարձյալ Ղրիմի վարպետները։ Ոչ պակաս հետաքրքիր է նաև այն փաստը, որ այս մոտիվը կիրառվել է XIV դ. Ղրիմի հայկական, հունական և թաթարական ճարտարապետական մի շարք հուշարձանների մեջ[39]։

Հիմնական հյուսվածքի հաջորդ տարբերակներից են փոքր կլոր հանգույցներով իրար հետ կապված երկու կիսակլոր «օղակները»։ Այսպիսին են XIII դ. Սանահինի վանքային համալիրի խաչքարի վրայի և Անիի՝ Ն. Մ. Տոկարսկու պեղած եկեղեցու մասերից մեկի հյուսվածքները[40]։ Հանդիպում է նաև այս հյուսվածքի երկու կիսաութանկյուններով շարքը, որը պատկերված է Հայաստանի XIII դ. մի շարք ճարտարապետական հուշարձանների վրա (Հաղպատ՝ խաչ-

---

35 Miloš Hrbaš — Edgar Knolbach, Die Kunst Mittelasiens, Praha, Tafel 44.

36 Г. Н. Гаганов, Геометрический орнамент Средней Азии («Архитектурное наследство», 11, М., 1958, с. 202, табл. XXX).

37 Л. И. Ремпель, Նշվ. աշխ., էջ 150, 161։

38 Г. Г. Гагарин, Собрание византийских, грузинских и древнерусских орнаментов архитектуры, СПб., 1900, табл. XXVI.

39 А. Л. Якобсон, Армянская средневековая архитектура в Крыму («Византийский временник», VIII, М., 1956, с. 183, рис. 9).

40 Նիկոլայ Տոկարսկի, Ճարտարապետական եզակի հուշարձան Անիի 1911 թ. պեղումներից, աղ. 33։

քարերի պատվանդան, Սանահին՝ ս. Աստվածածին եկեղեցու շքամուտք, Հառիճ՝ գլխավոր եկեղեցու քիվ և այլն)։ Եվ, վերջապես, կիսակլոր «օղակների» ավելի զարդացած տարբերակներից է այն հյուսվածքը, որի մեծ կիսակլոր «օղակները» հաջորդների հետ կապված են այնպես, որ վերևի կիսակլորի ձախ ծայրը միանում է հարևան ներքևի «օղակի» աջ ծայրի հետ։ Նույն սխեմայով, բայց հակառակ ուղղությամբ, միանում են այս «օղակների» մնացած երկու ծայրերը։ Այսպիսին են, օրինակ, Հարավսլավիայի (Խորվաթիայի) VI—VII դդ. և Շվեյցարիայի (Ներքին Ալպերի) VIII—IX դդ.[41] մի շարք մարմարյա սալերի վրայի հյուսվածքները։ Մեր կարծիքով, միջնադարյան ճարտարապետական դեկորի մեջ գերիշխող տեղ է գրավում հյուսվածքի մոտիվը, որը, ինչպես տեսանք, բնորոշվում է մեծ բազմազանությամբ։ Հայաստանի, ինչպես նաև Վրաստանի X—XI դդ. ճարտարապետական դեկորի մեջ լայն կիրառում է գտնում կլոր օղակներով հյուսվածքը, որի սկզբնական օրինակը կարելի է տեսնել քրիստոնեական միջավայրում, իսկ ավելի վաղ՝ Ասորեստանում, Ուրարտուում և այլն։ Այս հյուսվածքի մի տարբերակը՝ կլոր օղակի մեջ նույն տրամագծով ընդգծված չորս՝ մեկը մյուսի նկատմամբ փոխուղղահայաց կիսակլոր «օղակները», հիմք հանդիսացավ նույն ձևի համակարգի համար, այս անգամ բաղկացած կիսաութանկյուն «օղակներից»։ Ինչպես հայտնի է, այս վերջինի զուգահեռները շատ են Հայաստանի և Միջին Ասիայի ճարտարապետական հուշարձաններում։ Այսպիսով, քրիստոնեական և մուսուլմանական միջնադարյան ճարտարապետության հյուսվածքի նշված մոտիվները, ընդ որում և, այսպես կոչված սելջուկյան շղթան, ծնունդ են առել վաղ քրիստոնեական ճարտարապետական դեկորի մեջ։

ПЛЕТЕНКА В АРХИТЕКТУРНОМ ДЕКОРЕ СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ И ЕЕ ПАРАЛЛЕЛИ

АРШАВИР ТОРАМАНЯН

Резюме

Плетенка, как символико-декоративный мотив, уходит корнями в глубокую древность. В раннесредневековой архитектуре Армении плетенка, состоящая из круглых звеньев, фигурирует на церкви в Мастаре, а из овальных — в Аруче, Аштараке (Кармравор) и др. Плетенка с круглыми звеньями, на этот раз с малыми узлами, применялась в Зваргноце. В начале XI в., возможно в конце X в., этот мотив переживает второе рождение: в Армении он изображен на церкви Гагикашен, а в Грузии — в Кумурдо. В XI—XII вв. этот же мотив фигурирует на ряде памятников Абхазии, Болгарии и др. Эта плетенка была использована в ряде памятников VIII—X вв. Италии и Франции, XIV в.— Югославии, XVI в.—Румынии. В декоре XI—XIII вв. Армении (Мармарашен, Санаин и др.) появилась плетенка, состоящая из отдельных звеньев,— «булавка». То же самое можно видеть в Древней Руси (XI в.), Грузии (XIII в.), Молдавии (XIII—XIV вв.), Крыму (XV в.), Румынии (XVI в.). Примечательно применение упомянутых мотивов плетенок, в несколько иной трактовке, в декоре архитектурных памятников Средней Азии. Здесь, как и в Армении (XIII в.), круглое звено плетенки принимает восьмигранный вид. Этой новой трактовке обязана и так называемая сельджукская цепь, основа которой была заложена в X—XI вв. в Армении. Этот вид плетенки обнаруживается в Малой Азии, Крыму, Молдавии.

[41] Ljubo Karaman, Materjalna kultura i doba hrvatskih narodnih vladara, 346, Zagreb, Zora film, fig. 9, 10; Jean Hubert, Note sur la date des dalles de marbre sculpté de liman (Basses—Alpes) („Cahiers archeologiques", XIV, Paris, 1964, tabl. 86, fig. 2).